Հայտարարություն

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով առաջադրվեց դատավորների թվի ավելացման խնդիր: Ռազմավարության ընդունումից հետո սակայն վերոնշյալ խնդրի լուծմանն ուղղված քաղաքականության հապաղումն առավել ակնառու դարձրեց դատական համակարգում առկա՝ արդարադատության իրականացմանը խոչընդոտող գործոնները: Դրանցից կարևորագույնները տարիներ շարունակ քննվող գործերի քանակի աճի միտումն է, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ոտնահարման դրսևորումները: Ավելին, 2020թ. հետպատերազմական շրջանում իրավապահ մարմինների և դատական համակարգի միջև ծագած **«ոչ իրավական գործընթացները»**՝ կապված քրեական հետապնդման միջոցների կիրառման հարցում վերջիններիս կողմից դրսևորած ակնհայտ խտրական մոտեցումների հետ, ուղղակիորեն բացահայտեցին իրավական գործիքակազմը քաղաքականացնելու վտանգավոր դրսևորումները՝ ինչպես իրավապահ մարմինների և դատական իշխանության առանձին ներկայացուցիչների, այնպես էլ խնդրի իրավական կարգավորման համար պատասխանատու իշխանության մյուս ճյուղերի պատասխանատուների կողմից:

Նման պայմաններում ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.12.2020թ. շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման միայն առանձին դատավորներ են քննելու մինչդատական քրեական վարույթի գործերը (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները): Նման նախաձեռնությունը քաղաքական և իրավական գործընթացների ներկայիս շրջափուլում անընդունելի է՝ իրավապահ մարմինների և դատական համակարգի գործելաոճի առկա պայմաններում: Հարկ է նշել, որ մինչդատական քրեական վարույթի գործերն առնչվում են նաև ձերբակալման իրավաչափության վիճարկման, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննարկմանը:

Քրեադատավարական հարկադրանքի այս միջոցների խտրական կիրառման հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ-ում բարձրաձայնվել է անկախության հռչակումից ի վեր: Ընդ որում, ինչպես օրենսդրությունը, այնպես էլ դրա կիրառման մեկնաբանությամբ մասնագիտացված բազմաթիվ կառույցներ, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել են այդ հարցին: Մասնավորապես շեշտվել է, որ խափանման միջոցները երբևէ չպետք է կիրառել որպես պատժիչ քաղաքականության գործիքակազմ: Մինչդատական վարույթում, ինչպես նաև դատական քննության փուլում խափանման կոնկրետ միջոցի կիրառությունը բացառապես պետք է հետապնդի կանխարգելիչ նպատակներ, այդ թվում՝ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի վարքագծի պատշաճ դրսևորումն ապահովելու առումով: Ցավոք, ՀՀ իրավապահ մարմիններն իրենց գործելաոճում շարունակում են արատավոր պրակտիկան և գործերի քննության ժամկետների պատշաճ ապահովման մեխանիզմների փոխարեն շարունակում են անազատության մեջ պահելու հետ կապված խափանման միջոցների վերաբերյալ իրավական պատշաճ հիմնավորում չունեցող միջնորդություններ ներկայացնելու պրակտիկան: Անշուշտ, չի կարելի բացառել նաև դատական

համակարգի առանձին ներկայացուցիչների կողմից նախաքննական մարմինների հիմնավորված միջնորդությունները մերժելու դեպքերի հնարավորությունը: Սակայն պետք է փաստել, որ մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատավորներին առանձնացնելու վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախաձեռնված փոփոխությունների հիմնավորումը, թե դրանով լուծվում է դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու խնդիրը, ընդունելի և վստահելի չէ, քանի որ բացակայում է կայացված դատական ակտերի որևէ ուսումնասիրություն, իսկ օրենսդրական փոփոխության առաջարկը ներկայացվում է կոնկրետ իրավիճակում, կոնկրետ խնդիրների լուծման նպատակով, որն ունի ակնհայտ քաղաքական ենթատեքստ:

Մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատավորների առանձնացումը պարունակում է նաև կոռուպցիոն ռիսկեր, քանի որ նեղանում է այդքան շահարկվող կալանքի միջնորդությունը բավարարող կամ մերժող դատավորների շրջանակը, ինչի պայմաններում վերջիններիս նկատմամբ ազդեցություն կիրառելու հավանականությունն աճում է:

Կարող ենք փաստել, որ հերթական անգամ կառավարող քաղաքական ուժը հանդես է գալիս ոչ թե դատական իշխանության անկախության ապահովման համար անհրաժեշտ համակարգային լուծումներով, այլ հատվածային, իրավիճակային լուծումների նախաձեռնությամբ, որն ավելի է խորացնում դատական իշխանության կախվածությունը քաղաքական գործոններից, ինչը չի կարող նպաստել արդարադատության իրականացմանը, դատարանների հանդեպ հանրային վստահության վերականգնմանը և քաղաքական նպատակահարմարությունից զերծ դատական իշխանության ձևավորմանը:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև արդարադատության իրականացման արդյունավետ գործիքակազմի գործարկումն ապահովող իրավական նախաձեռնություններին տրամաբանական և համակարգային բովանդակություն հաղորդելու, այդ գործընթացների ապաքաղաքականացվածությունն ապահովելու նպատակով՝ կոչ ենք անում.

1. **քննարկել կոնկրետ գործերով նախաքննական և դատախազական հսկողության մարմինների կողմից մինչդատական վարույթում կիրառվող քրեական հետապնդման գործիքակազմի կիրառման արդյունավետության և հիմնավորվածության հիմնախնդիրը, այդ ոլորտում կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերլուծություններ,**
2. **վերլուծել դատարանների կողմից կալանքի միջնորդությունները մերժված քրեական գործերով այլ խափանման միջոցների կիրառության կանխարգելիչ ազդեցության արդյունավետությունը,**
3. **նախորդ երկու կետերով նախատեսված քայլերն իրականացնելուց հետո միայն որոշում ընդունել մինչդատական քրեական վարույթի գործերը (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները) քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից քննելու նպատակահարմարության վերաբերյալ:**